

Եկամուտ ու արարակ ենք այս ամսությունը
ապահով ու անշատ ազգի բարեկանության
մասնաւության պահանջման ու պահանջման
համապատասխան պարագաներ առաջ են առաջընթացը և այլ
համապատասխան պարագաներ առաջ են առաջընթացը և այլ

ՀԱՅԿԵՐԸ ՏԵԱԿԱՍՄԱՆՈՒՄ

ԳԱՐԵԳԻՆ ԽԱԺԱԿԱՆԵԱՆ

I

Տաճկասպանը, մանաւանդ նրա ներքին՝ Ասիական նահան գներն
այնալիսի երկիրներ են, շրջապարուած այնալիսի ինքնօրինակ ու
տարրեր պայմաններով, որ երբէք չի կարելի նրանց դասաւորել
ուրիշ պետութիւնների շարքում և ընդհանուր օրէնքներ դուրս
բերել նրա հարկացին սիարեմի մասին։ Օրինակ՝ բոլոր քիչ ու շատ
քաղաքակիրթ երկիրների հարկերը բաժանում են երկու օրոշ
խմբերի. ուղղակի և անուղղակի հարկեր։ Խակ Տաճկասպանի հար-
կերը Յ խումբ են, այն էլ իրենց ինքնուրոյն բաժանմունքներով։
Անուղղակի և անուղղակի պետական կամ օրինական հարկերի վրաց
աւելանում է կրթւած մարդու համար անըմբոնելի մի հարկ ևս.
ապօրինի հարկ։ Զուր տեղը կը վնառուէիք դուք քաղաքապիրեսատ-
կան բառարաններում մի այդպիսի վայրենի հասկացողութիւն։
ամեն հարկ օրէնքով է դնուում, խսկ ապօրինի հարկ ոչ մի տեղ
չի կարելի վերցնել, բացի Տաճկասպանից։ Այդ խումբ հարկերը
քրդերի, չեղքեզների, ալբանացիների, մասամբ լազերի, զաղաների
և այլ թափառական զինւած ցեղերի վերցրած հարկերն են, որ
առնուում են զէնքի զօրով, ուժեղի գերագոյն իրաւունքով։

Մի ուրիշ օրինակ։ Ամեն կրթւած պետութիւն ունի անուղ-
ղակի հարկեր։ Տաճկասպանն էլ ունի։ Առաջնակարգ պետութիւն-
ների մէջ անդամ յաճախ արդիւնագործութեան և վաճառախնու-
թեան այս կամ այն ճիւղը մենավաճառութիւն է։ Տաճկասպանում
էլ կայ այդ մենավաճառութիւնը։ Միայն պարբերութիւնը նրա-

նում է, որ ուրիշ կրթւած պետութիւնների մէջ մենավաճառ կամ ինքը պետութիւնն է և կամ՝ նրա որոշ պայմաններով գեղական զրամափերերը։ Խոկ Տաճկաստանում մենավաճառ են հանդիսանում օպար զրամափերերը, որ խոշոր փոխարւութիւններ են արել Մարգարէի փոխանորդին և զրա փոխարէն սրացել են ձխութանի, աղի, լճերի և զետերի ձիւորսութեան, մաքսագների և այլ մենավաճառներ։ Ուրիշ պետութիւնների մէջ կամ պետութիւնը կամ նրա թուլլուութեամբ ուղական զրամափերերը զների որոշ չափեր (normes) են նշանակում, իսկ Տաճկաստանում պարբառէր մենավաճառները զիբում են ամրող երկիրը և նրա բնակիչներն իրը որս—ոբքն կարող են՝ կարէ ու կեր!

Ուրիշ պետութիւնների մէջ ուղղակի հարկերը ծանրանում են զլխաւութապէս հողերի, ազղինների, աների և այլ շինութիւնների վրայ։ Խոկ Տաճկաստանում նրանք ծանր քարի պէս ճնշում են զիւղարնութեական բոլոր արդիւնքները, անհարների գոյութեան ընդունակութիւնը, արհեստաորի ձիրքը և այլն, ի հարկէ չխաչելով ոչ հողացին սեփականութեան, ոչ ուրիշ անշարժ կալւածներին, ոչ էլ զիւղարնութեական անասուններին։

Մեր այս յօդւածի նպարակն է ծանօթացնել Ամուրձակի լնթերցողներին գլխաւորապէս Տաճկահայաստանի պեղական ուղղակի հարկերի, նրանց գանձման սիստեմի և նրանցից առաջացած գնորդական զրութեան հետ։ Դրա համար էլ մենք քիչ կանդ կառնենք սնուղղակի հարկերի և թափառական զինւած ցեղերի բուրքերի վրայ, թերեւս թողնելով զրանց մի այլ ժամանակի։

Ա. ՕՐԵՆՍԿԱՆ ՈՒՂՂԱԿԻ ՀՅՈՒԿԵՐԸ

Պեղական կամ օրինական ուղղակի հարկերը մօրաւորապէս հերկեալ բառակներին կարելի է վիրածել. 1) Գլխահարէկ կամ Բէղէլը-Էսկէրիէ կամ զինւորական ուուրք, 2) Ընտանեկան կամ Ամունական հարկ, 3) Հողային հարկ կամ Արազը Վէրգըսի, որ բաժանում է երկու բաւական որոշ գեսակի -ա) Տան, խանութի կամ որ և է շինութեան բեղի հարկ և բ) ազգու, արտի, արօտապեղի հարկ; 4) Տան հարկ կամ Էմլաք, 5) Արհեստի հարկ կամ թիմարէթ կամ թէմէթ-թօհաթ, 6) Վաճառական հարկ կամ Զիլ-

դիա, 7) ծանսապարհների հարկ կամ ԽօԼ-փարասը, 8) Ապահովութեան հարկ կամ բազմանդ-փարասը, 9) Կմնդանիների հարկ կամ Աղնասմ կամ Ղամճուռ և 10) Երկրագործական հարկ կամ Աշար:

Ահա մօրաւորապէս սրանք են պետական բոլոր ուղղակի հարկերը: Մօտաւորապէս ենք ասում, որովհետեւ Տաճկաստանում ամեն բան կախւած է զօրեղների, պաշտօնեաների բացարձակ բարեհայեցութիւնից: Արդ, ինչ ժամանակ և ինչ ձևով ու գենայ, բարձր կամ նոյն իսկ ցածր պաշտօնեան կարող է, բացի այդ բոլոր հարկերից՝ նշանակել ու գանձել տալ նաև իր քէֆն ուղած մի որ և ուրիշ հարկ: Կարող է նա աւելացնել նոյն այդ օրինական հարկերը և կամ ուղած մարդուց երկու, երեք անդամ գանձել միենայն հարկը: Կամայականութիւնը լայն ու ընդարձակ ասպարէզ ունի այնպեղ: Բողոքելը շատ հետու կը դանի երկրի ազգաբնակութեան և միշտ պուժողը ժողովուրդը կը լինի...

Մենք յիշեցինք օրէնքին պահանջը կամ գոնէ օրինական ոյժ սրացան բոլոր հարկերը: Այժմ քննենք կամ նկարագրենք, ի հարկ է՝ որքան կարելի է, այդ հարկերից ամեն մէկն առանձին-առանձին:

1) Գլխարհարկ կամ Բէղէլը-Հսկէրիէ: Սա զինւորական հարկն է: Տաճկական օրէնքով ամեն 135 հոգի արու անձերից մի զինւոր է վերցւում: Գրա համար էլ ամեն 135 քրիստոնեայ արու անձ պէտք է տայ մի զինւորի արժէքը, եթէ կարելի է ազգակա ասել: Իսկ իւրաքանչիւր մի զինւոր Տաճկաստանում գնահատում է 5.000 դահեկան (մի դահեկանը կամ զուրու շը հաւասար է մօրաւորապէս 8—8½ կոտէիի, իսկ մէկ լիրան արժէ 108 դահեկան): Այդպիսով իւրաքանչիւր արու անձի վրայ ընկնում է պարեկան մօր 37½ դահեկան զինւորական հարկ:

Բէղէլը-Էսէրիէն առնւում է 1—60 պարեկան հասակը ամեն արու անձից: լինի նա կաղ, կոյր, հաշմանդամ, առողջ միենոյնն է:

Նախքան այս հարկի հաւաքման ձևի և նրանում կարարող բազմաթիւ վեղծութների մասին խօսելը՝ մենք չենք կարող չբացարել նրա ծագումը, որ ներկայացնում է մի պեսա՛ սոցիոլոգիական հնութիւն, որ գոյութիւն ունէր հին Աթէնքում, Սպարտայում, Հռոմում և այլն, և որ այս օր էլ զեռ գոյութիւն ունի

Հահմեղական Պարսկաստանում և Աֆրիկական վայրենի ու բար-քարոս ցեղերի մէջ:

Բէգելը-Կակէրիկ - բառացի նշանակում է «զինւորութեան փո-խարէն»: Քրիստոնեաչ հպատակները կամ Խայան զինւոր չեն պա-յիս: Դրա համար մէլ նրանք պէտք է, իբր փոխարինութիւն, որոշ հարկ տան: Եթէ ոչ անարդար կը լինէր Մահմէդի հաւաքացողնե-րից զինւոր վերցնել և զեւուր սայացից չվերցնել Բայց զինւոր վերցնել, զէնք տալ զեւուր սայացի ձեռքը և նրան վարժեցնել այդ զէնքը գործածել, կը նշանակէ չափաղանց միամիւր լինել: Զէ որ այն ժամանակ ճնշման, զժողութեան կամ անարդարութեան առաջին դէպօւմ և եթ Մարգարէի փոխանորդի տւած սուր զէնքը կը գառնար իր և իր հաւաքարիմ հետեւորդների դէմ:

Այս երեսով նոր չի ծնւել պաճիկների մէջ և ոչ էլ միայն նրանց է յասուկ: Խոլոր պիրող բարբարոս ցեղերը օգուել են այդ սկզբունքից իրենց հպատակների վերաբերութեամբ:

Երբ Սուլէյմանի առաջնորդութեամբ 1224 թւին թուրքերը Խո-բասանից 50.000 հոգով դադթեցին և բռն դրին Հայոց երկրի արևմտա-հարաւային մասերում՝ նրանք գեռ վրանաբնակ թափառական բար-բարոսներ էին, աւելի վար վիճակի, քան այսօրւայ լեռնական քուրղը: Սուլէյմանի բարբարոս հորդացի բոլոր արու և մասամբ էդ անդամները զինւած կաւողներ էին, ճիշտ այնպէս, ինչպէս մի այլ յօդւածում (բ. Մուրճ 1898 № 12) ակնարկեցինք սկզբնական այն ցեղերի մասին, որոնց մէջ գեռ պետութիւնը չի ծագել: Սուլէյմանը, ցանկալով վերա-դառնալ Խորասան, ճանապարհին մեռնում է և նրա 4 որդիներից երկուսը տանում են նրա հորդացի մեծ մասը Պարսկաստան, իսկ միւս երկու որդիքը՝ Դինդարը և Էրտողրուլը՝ 400 լնդանիքով, չե-ցին գէպի Արևմտապէ, Սլաէդղին և սելջուկեան սուլթանի օդնու-թիւնը խնդրելու: Սլաէդղինը տւեց քաջ էրտողրուլին Փրիւզիացի Պարահիսար ամրոցն իր հողերով, ուր և էրտողրուլն իշխեց մինչև 1288 թւականը: Նրան փոխարինեց իր որդի Օսմանը կամ 0թմանը, որ իրեն հրաժարակեց Սուլթան և իր անունով սկսեց փող կրրել պալ: Էրտողրուլի և Օսմանի ժամանակ իսկ թուրքերն սկսեցին արիել Հայոս-տանի արևմրեան մասերին: (Տես Վեբերъ, Վсеоб. исторія, т. VIII, էջ 580-581 և Գ. եղ. Ալվազովսկի «Պալմութիւն պանն Օսմանեան,

հ. I.): Նրանք սիրեցին և հպատակեցին իրենց բնակւած շրջանի բոլոր տեղական ազգաբնակութիւններին: Այդ սիրող ցեղը, որին բիւն կամ աշխեթը բնականաբար իրեն համարում էր աւելի ազնիւ ծագումով, որ կուտած է միայն տիրելու, գինք դրժանելու և կռւելու, իսկ բոլոր հպատակ ռայաներն ստիպած են հպատակւել, աշխատել և տիրողներին ապրելու միջոց մարտակարարել: Օսմանի ցեղը խսկյն զրկեց հպատակներին զինք կրելու իրաւունքից վիրեւում ակնարկած որոշ պատճառով: Այդ բաւական չէ. սիրողը հպատակից տարբերելու համար՝ զրկեց նրան որոշ զոյնի հագուստներ կրելու, որոշ տեսակ զլխարկ ծածկելու իրաւունքից: Օրինակ՝ ռայան կարմիր զգեստ հագնելու իրաւունք չունէր, որովհետեւ բարբարոսարեկցու տղայական երեակայութիւնն այդ խփառ զոյնը համարում էր աղնւականութեան նշան: Այդ էլ բաւական չէ: Անդէնացած հպատակ Ռայաները զրկեցան և պիտական գալուարանում վկայութիւնը տալու իրաւունքից, երբ այդ վկայութիւնը տիրող ցեղի անդամներից մէկի գէմ էր ուղղւած: Ռայայի վկայութիւնն ընդունելում էր (և այժմ էլ ընդունելում է) միայն ռայայի գէմ, իսկ սիրող ցեղի (ցեղոյն էլ նրա կրօնակից բոլոր անձերի) անդամի գէմ նրա վկայութիւնը չէր անցնում:

Մահմեդի կրօնը լրացրեց ու սրբացրեց սիրող Օսմանցիների այս սովորութիւնները, զարձրեց նրանց Շարիէթի օրէնք, իբր Մարգարեի բերանով Սլլահից պրւած անխախտելի զիբք:

Անցան պարիներ և դարեր: Օսմանի հաւասարասէր սիրող ցեղի անդամները շաբացան: Նրանց մէջ էլ առաջացան՝ նիւթական անհրաժեշտութիւնից սրիպւած՝ երկրագործներ, արհեստաւորներ ու վաճառականներ: Ծնունդ առան և զարգացան աղքատ ու հարուստ, աշխատաւոր կամ կառավարող և կառավարող գասակարդեր: Ռայան և դիրող ցեղի մի ահագին մեծամասնութիւնը բընդիմասական հաւասարեցան իրար և մինչև իսկ ռայայից էլ աւելի նեղ նիւթական դրութեան հասան, որովհետեւ աւելի յետամինաց, աւելի քիչ կուլտուրական տարրն էին: Բայց որովհետեւ երկրի տիրոդ օրէնքները հրադարակւած էին իբր անխախտ Աստածային դիք, որ փոփոխել անկարելի է, զրա համար էլ բոլոր Մահմեդական տարբերը պահպանեցին իրենց սկզբնական տիրողի առանձնաշնորհում:

Ները։ Մինչև օրս էլ ռայացից շաբ աւելի ազգար թուրքն ու քուրքը դէնք կրելու իրաւունք ունին. մինչև օրս էլ ռայացի վկայութիւնը դին չունի ընդգէմ մահմեդականի։

Այսպէս ուրեմն գլխահարկը, զէնք կրելու իրաւունքից զուրկ վինելը, վկայութեան չընդունելը և այլն՝ մասցրվներ են հին ժամանակների։ Ժամանակը, հասարակական կեանքը, նրա սղացման-ները, գնդեսական ու քաղաքական կեանքը զարդացել, առաջ է շարժւել, իսկ երկրի որոշ օրէնքները, նրա որոշ ինստիտուտները մնացել են հին գարերինը։ Դրանից առաջացել է մի հրէշաւոր դիսուանս կեանքի ներկայ սպահանջների և հնացած ինստիտուտը։ Ների մէջ։

Տարօրինակ բան. զինուոր չեն առնում ռայացից, զրկում են նրան զէնք կրելու իրաւունքից, խլում են նրանից բարբարոս երկրում միակ իրաւունք ճանաչացնել պառզ գործիքը՝ դրանով ռայացին գնում են անսպաշտուան մի ստրկի զրութեան մէջ և զեռ նրանից հարկ էլ են ուզում, որ այդքան ողորմելի, այդքան սրբուկ վիճակի արժանացըրին նրան...

Դառնանք Բէդէլը-Էսկէրիէի գանձման եղանակին։

Կառավարութիւնը հաշւում է ամեն գիւղի, ամեն համայնքի կամ թաղի արու բնակիների թիւը և իւրաքանչիւրի համար նշանակելով 37^{1/4} դահեկան դարեկան՝ լնդհանուր գումարը յայտնում է գիւղի կամ թաղի ներկայացուցիներին։ Խնչուկս ասացինք, այդ արուների մէջ կարող են լինել կոյրեր, համրեր, հաշմանդամներ, հիւանդուներ, գժեր և այլն, բայց զրանք մնում են հարկադուների լնդհանուր ցուցակի մէջ։ Կառավարութիւնը ճանաչում է գիւղը, թաղը կամ համայնքն իբր մի ամբողջութիւն, որ պէտք է որոշ գումարը վճարէ լրիւ։ Բայց մեծահոգի կառավարութիւնը մկածում է և այդ զինուորութեան համար անպէտք անհաղների մասին։ Մի կողմից նա նրանց վրայ էլ հարկ է գնում, իսկ միւս կողմից բոլոր հարկը սպահանջում է ամբողջութիւնից, որ իր մի գանեկանն անգամ չկորչի, իսկ երրորդ կողմից յանձնարարում է հարկադուների, որ 15 դարեկանից փոքր անձերի ուուրքը քիչ վերցնեն, որ հաշմանդամներին, վեաւածներին, գժերին կամ, լար գանձիկների, «Ասրծու մարդկանց» բոլորովին աղաւեն այդ հարկից։

Հա բարեղործութիւն է, բայց ի հաշիւ մողովրդի, ի հաշիւ հարկարու համայնքի վճարելու ընդունակ անձերին

Ենթադրենք, որ զիւղի վրայ ընկել է ուղիղ 10.000 դահե. կան, որովհետեւ բար առաջնորդարանի գուած գեղեկութիւնների և ըստ «Համբուկ» թղթերի կամ ծննդեան վկայականների՝ այդ զիւղում կայ 270 ողամարդ 1 պարեկանից մինչեւ 60 պարեկանը: Հարկը զրւում է, բայց հենց դրա երկրորդ օրը կարող են մեռնել 10 արու զաւակներ, այդ նշանակութիւն չունի՝ մեռածից ել հարկն առնում են ցնոր կարգավրութիւն:

Վերևում ասացինք, որ Տաճկաստանում մի զինւորը գնահարում է 5.000 դահեկան: Այդ էլ մի փոքրիկ բացագրութեան է կարօւու Եթէ որ և է հարուսր գաճիկ չուղենաց զինւոր զնալ, վճարում է 5.000 դահեկան և ընդ միշտ ազարուում է զինւորութիւնից: Խոկ քրիստոնեայ ուայն (այսինքն ամեն 135 արու քրիստոնեան Խմբ.) պարզաւոր է ամեն պարի վճարել այդ նոյն գումարը:

Թէ այս և թէ ուրիշ հարկեր ընդհանրապէս բաժանում են մի զիւղի կամ մի համայնքի վրայ և այդ ամբողջութիւնն ընդունում է իբր ֆիսկալ հիմնարկութիւն, պետութեան հարկերը չկորչելու համար. անկարող անհաղներից դժւար է գանձելը. ուրեմն թող ամբողջութիւնը պայ:

Ամեն զիւղի կամ թաղի համար բէդէլը-էսկէրիէի չափը որոշելուց յեւոյ յանձնուում է մշտուալին գանձելու: Մխրաբն ընդունում է զիւղից կամ թաղեցիներից և ներկայանում է կառավարութեան առաջ իբր պարախանագուու իր շրջանի զինւորական գուրքի: Միւնոյն մարդը կարող է լինել մխրաբ մէկ, երկու և աւելի զիւղերի կամ թաղերի:

Ըստրած մխրաբի համար կառավարութիւնը պահանջում է առնւազը 2—3 կարող երաշխաւոր անձեր ամեն զիւղից կամ թաղից, որ եթէ մխրաբը փչացնի կամ ծախսի հաւաքած գումարներից, այդ ստորագրողները պարպաւոր լինեն վճարել նրա փոխարէն: Խոկ այդ մխրաբին երաշխաւոր կանդնող անձերը յաճախ վերցնում են նրանից օրոշ ստորագրութիւն և իբր գրաւական՝ կամ նրա հողերը, կամ դունն ու այգին: Խոկ եթէ մխրաբն այնքան կալած տնի, որ կարող է միայն դրանով ալահավեցնել իբ շրջանի հար-

կերը՝ կալւածները կը դնէ կառավարութեան մօր իբր գրաւական և այլ ևս երաշխաւոր անձերի կարիք չի ունենայ:

Այսպէս փոխադարձ երաշխաւորելոց և բոլոր ձեւականութիւնն աները կապարելոց յերոց՝ ժողովրդից ընտրւած մագարը մզւռում է իր պաշտօնի մէջ: Նա կամ ինքն է հաւաքում հարկը կամ իր կողմից նշանակում է հարկահաններ: Միաբարը միշտ սրանում է կուռավարութիւնից մի քանի զափիթիէններ (ոսպիկան) հարկերը դանձելու համար: Եթէ որ և է անձ չի տալիս ոռութքը՝ մագարն անմիջապէս նրան բանաբարկել կարող է տալ Ալայ-թէյի կամ Զապիթա-Մէմուրի (զափիթիէնների մէծի) միջոցով:

Միաբարն սրանում է որոշ սոճիկ, նայելով իրեն ընդուրովների հետ կապած պայմանին: Նրա սոճիկի չափը կախւած է հաւաքելիք հարկի չափից: 100 ին 4—10⁰/₀ նշանակում է մագարի համար և բարդում ժողովրդի վրայ, այնպէս որ հարկահանը կամ մագարը կառավարութեան վրայ ոչինչ ծախք չի նստում:

Եթէ մէկը չի տալիս ոռութքը՝ նրա բոլոր կահ-կարասին, անկողինը, անհրաժեշտ բոլոր իրերը ծախսում և պարուքը լրացնում են: Միմիացն որ և է վաճառականի մնաններ հրարարակուած դէպքում մի քիչ պահուում է մարդկութեան օրէնքը. նրա անձնական և ընրաննեկան անհրաժեշտ կարասին և իրերը չեն հանւում վաճառքի:

Իւրաքանչիւր զիւղի կամ թաղի յայրնուում է իշ վճարելիք հարկը և ապա համայնքն սկսում է այդ որոշ գումարը բաժանել իր անդամների մէջ համբիայական սկզբունքով: Նաև ունեցողից՝ շար են առնում, քիչ ունեցողից՝ քիչ, իսկ աղքատներին, անկարողներին ու պակասաւորներին բոլորովին ազարում են ոռութքից, ի հարկէ բարգելով նրանց բաժինները հարուստների վրայ: Եթէ նահասիեւական ժողովրդի մէջ մնացած այս արդարասէր փոքրիկ մնացորդներն էլ չլինէին, վաղուց հիմնայաւակ կործանւած կը լինէր թրքահապառակ քրիստոնեաների համարեա բոլոր դնուեսութիւնը:

Գիւղի կամ թաղի բաժանած հարկերը ցուցակագրւում և հոգեւոր կառավարութեան կամ առաջնորդարանի միջոցով յայնուում են կառավարութեան. այս վերջինս էլ ցուցակագրելով այն իր թղթերում, մի օրինակ ուղարկում է մագարին պաշտօնապէս, որ սկսի գանձումը:

Հարկերից ամենապարզը և, ըստ երկոյթին, այնպիսին, որի մէջ ոչ մի հնար չպէսը է լինէր որ և է զեղծում գործելու՝ այս զինորական հարին է: Իաց յետամնաց ու անիշխանութեան մարդուած երկիրներում ոչինչ չի կարող կափարւել առանց զեղծումների: Եեդելը էսկերիէի գանձումի մէջ էլմոնում են բաղմաթիւ զեղծումներ: Յիշենք զրանցից միայն մի քանի զլիսաւորները:

Միտրարի ընտրութեան մէջ, հարկերի համփայական բաժանման խնդրում և այլ հասարակական վճիռներով կափարւող գործերում համարեա երբէք հասարակութիւնը չի մասնակցում իր բոլոր հասակաւոր արու անդամներով. ամեն գիսակ ժողովներ, լնորութիւններ և այլն կափարում են հասարակութեան մի քանի գիշխանները, կամ հարուսոր, ազգեցիկ անձերը:

Եեդէլը-էսկերիէն բաժանում են այդ գիշխանները գիւղերում և ապա թուղթը դրկում մօրաւոր հողեւոր վարչութեան, իսկ քաղաքներում՝ առաջնորդի մասնակցութեամբ են անում այդ: Առաջնորդարանը այդ իրը թէ հասարակական վճիռը ուղարկում է կառավարութեան, որը և յանձնում է միարարին գանձելու:

Տգէտ, անդրագէտ ռամփէր ոչինչ չի հասկանում դրանից: Մըլսուարը նրան յացնում է, թէ հարկն այսքան է – և նա լսում է... Կ՞նչ կարող է անել. բողոքելը նրա վրայ միշտ աւելի թանգ է նըստել, քան որ և է ապօրինի պահանջի կափարումը: Շափ էլ հեշտ մարսելու բան չէ աշխարհիս կարողների կամ իշխանաւորների գէմ բողոքելը, նամանաւանդ ապօրինութեան և կամայականութեան թագաւորութեան երկրում:

Ուրիշն մի անգրագէտից շատ կամ քիչ առնելը կախւած է միարարի բարոյականութիւնից: Եւ ահա ձեզ զեղծման մի բաց դուռ:

Հարկն սրանում է միարարը և սրացագիր է փալիս, այն էլ թուրքերէն: Կարդալ չգիտէ ամբոխը. Բնէ և ինչքան է գրւած՝ իր համար անցայտ է: Ֆալում՝ ծոցն է գնում: Յաճախ սրացւում է շատ, քիչ է գրւում: Յաճախ կորցնում է սրացագիրը, և միարարը երկրորդ և նոյն իսկ երրորդ անդամն է գանձում նոյն հարկը նոյն անձից: Չաւեց, իսկոյն միստարը բանտն է զցել փալիս ըմբոստին ալայ-բէցի միջոցով, օրինակ 50 գաեհկանի համար: Ամեն մարդ չի կարող դանել Յաճկական բանդի, այդ իսկական դժողքի կեանքը:

Հաւաքւում են բանբարկւածի ազգականները դուրս առնելու. բայց Ալաբեկը ռոտը վար է զարնում. 50 դահեկանի տեղ 200-300 է առնում և աւելորդ առածը կիսում են մխարի հետ, համաձայն իրենց առաջուց կապած պայմանի: Այդ էլ ոչինչ: Վերջին ժամանակներս բանբարկութեան ամեն մի չնին դէպքի ժամանակի խոկոյն ասպարէզ է գալիս և «կոմիթաճիութիւնը», որով սարսափեցնում են ունեօր ու խաղաղ հարկարւին և կողոպտում նրա ամբողջ սպացւածքը: Զափազանցութիւն չէ, երբ ասում են, որ Տաճկաստանում մարդ բանդ է գնում գաւառի կամ քաղաքի ամենահարուստը համարւելով՝ այնտեղից դուրս է գալիս օր հացի կարօտ, իբր մուրացիկ:

Զեղծումներից ամենասովորականը և ամենավասակարը ժողովրդի համար հետևեալն է: Մխարը հաւաքում է հարկերը. ենթադրենք, որ արդէն գանձել է մօտ 30,000 դահեկան: Նա այդ դումարից 10—12,000-ը գրպանն է դնում և գողացածը ցոյց է տալիս կառավարութեան իբր ապառիկ պանդիստութեան գնացած անձերի վրայ: Վերադառնում են այդ անձերը պանդիստութիւնից, հետները բերելով իրենց աղի քրտնքի մի քանի քարացած կաթիւները—մի քանի լիրա. կառավարութիւնը բանում, բոլոր մխարի ցոյց դրած գումարներն առնում է նրանցից. դակը մնացածն էլ սպառում են միւս պաշտօնեանները—շար չրանջելու կամ «նրա Սփամպոլում», Բուլղարստանում, Խուսէթում արած կոմիթաճիութիւնները ծածկելու համար: Իսկ քրիստոնեայ սայան բողոքելու մասին չի մրածում անգամ:

Վեհապետեան Յարութիւն պատրիարքի օրերում (1885—87) լոյս ընկաւ երուսաղէմի չարաբասրիկ պարպքի խնդիրը: Այդ պարպքի չափը, եթէ չենք սխալում՝ մօր 60,000 ոսկի էր: Յարութիւն պատրիարքի խնդիրքով Սուլթանը կարգադրեց, որ զինւորական հարկի վրայ աւելացնի ամեն մի արու անձին Յ դահեկան ես, որպէս զի Յ տարւայ ընթացքում բոլոր պարպէը գանձւի: Այսպիսով $37\frac{1}{4}$ դահեկանը դարձաւ $40\frac{1}{4}$: Երեք դարի հաւաքւեց, պարպքը վճարւեց, իսկ աւելացած Յ դահեկանն այլ ևս չվերացւեց... Այդ էլ եղաւ Յարութիւն պատրիարքի հասցրած խէրը ժողովը դիմումին: Դանձւած գումարից 14,000 ոսկի դեռ ևս մնում է կա-

ռավարութեան մօտ Աշբգեան, Բարդուղիմէսո, Խզմիրլեան, Ենոյն իսկ Յարութիւն պարրիարքները շար անգամ ջանացին դուրս առնել այդ դումարը, բայց բոլոր ջանքերն իզուր անցան. գանձարանը դարարկ է... Շար անզամ ժողովուրդը խնդրեց, որ 3 դահեկան աւելորդը վերցնեն, չնչեն—բողոքներին ու խնդիրներին լսող չեղաւ...

Այս հարկը թեթևացնելու համար ժողովուրդն աշխատում է ծածկել իր արու զաւակների թիւը: Վյդպիսի ծածկւածներ շար կան: Իսկ եթէ պարահեց, որ բացեց, իսկոյն կառավարութիւնը բոլոր անցած դարիների թւով Յ՛ դահեկան մի անդամից է առնում:

Տուն, խանութ կամ մի այլ կալած ծախելու դէպում պաշտօնեաները քննում են բոլոր «գէֆտէրները» (մատեան) և պապական, հայրական բոլոր իսկական ու երեակայական ապառիկները հանում միջից... Մնացած փողի խէրը թող փեսնի ծախողը:

Ակրթութեան և այլ մանր-մունը պարահական կամ մշտական հարկերը բարդում են առհասարակ այս հարկի վրայ և յանձնուում միստարին հաւաքելու:

2) Կալւածների հարկերը: Սրանք են. ա) Տան հարկ կամ Միլքիէ և բ) Հողային հարկ կամ Արազը-վէրգըսի կամ Էմլաք:

Այս երկու գեսակ հարկերն էլ գոյութիւն ունին և գիւղերում և քաղաքներում: Սրանց առարկաներն են գները, խանութները, զոմերը, մարագները, փարախները, ջրաղացները, բաղնիսները, մի խօսքով՝ բոլոր շէնքերը և արօտուրեղերը, արտերը, այգիները (միայն հողը, նրանց բռնած գեղը և ոչ բերքը):

Պէտք է նկարել, որ գների, խանութների և այլ շէնքից էլ է հարկ վերցում, դան դակը եղած գեղնից էլ:

Ներքին գործոց նախարարութեան իշխանութեան դակ կայ մի ապեան, մի հիմնարկութիւն, որ կոչում է Էմլաք-Դայրէսի: Ի հարկէ սրա բոլոր անդամները նշանակում են նախարարութեան կողմից և ոչ ընդունում ժողովրդից:

Էմլաք-Դայրէսին գնահատում է բոլոր անշարժ կալւածները, թէ շինութիւնը և թէ հողը, և ապա գնահատած դումարների համեմատ նշանակում կալւածների հարկը: Հողային կալւածներից և շէնքերից առնում են 1000-ին 6 դոկոս:

Այս հարկերի գանձումն էլ յանձնուում է մարտարին, որին կառավարութիւնը տալիս է նախօրօք տպագրւած սփացաղբերը: Միաբարը կացնում է նրանց վրայ 1 դահեկանոց մարդաներ, գրում վրան իր սփացած գումարը, սփորաղրում և յանձնում է կալւածի ակրոջը: Այդ հարկի վրայ բարդում է և մարկացի 1 դահեկանը, և՝ միաբարի 8—10% ռոճիկը, որովհետեւ միաբարը բոլոր հաւաքած զումարից է սփանում այդքան գոկոս և ոչ միայն ԲԵՂԵՂԸ-ՂԱՂԵՐԻԵցից: Այսպէս ուրեմն՝ իթէ գունը զնահափւած է, օրինակ, 16.666²₃ դահեկան՝ նրա միւլքիւն կը լինի ուղիղ 100 դահեկան, բայց միաբարը կը բարդէ այդ 100-ի վրայ իր 8 կամ 10% -ը և մարկացի 1 դահեկանը, որ կանէ 109 կամ 111 դահեկան:

Այս հարկերի զեղծումներն էլ համարեած միաբեսակ են, ինչպէս ԲԵՂԵՂԸ-ՂԱՂԵՐԻԵՑԻՆը. նոյն անդրադեպ ու դղէտ սամփիկը, նոյն շաբա առնել, քիչ դրելը քոչաններում (արացաղիր), նոյն երկուերեք անգամ գանձումը, չփալու զէպքում բանորը, ալայ-բէյը, կալւածի ծախելը և այլն: Բացի այս ամենը, սրանց մէջ մի ուրիշ զեղծում էլ կայ, որ յարուի է միայն այս խումբ հարկերին. դա զնահափութեսն մէջ գործադրւող զեղծումն է: Էմլաք-Դայրէսիի անդամները զնահափում են կացքերը խիստ բարձր գներով, իսկ ժողովուրդը ձգուում է պակաեցնել գումարները, հարկ քիչ քնարելու համար: Եւ սկսում է կաշառակերութիւնը տան կամ կալւածի տէրերից: Ով կաշառք չի տալիս, նրա սփացւածքը գնահափում է 3, 4, 5 անգամ աւելի... Ի հարկէ կալւածադէրն աւելի ձեռնորու է համարում միանգամ կաշառք տալ, քան 4—5 անգամ աւելի հարկ տալ դարեկան:

3) ԵօԼ-Փարասը կամ ճանսոպարհների հարկ: Այս հարկը նոր է լոյս ընկել: Առաջ Տաճկաստանը երբէք կարիք չէր զգում կանոնաւոր ճանապարհների, բայց եւրոպական կենաքի և մասնաւորապէս Ռուսաստանի հետ ունեցած վերջին ընդհարումը նրան շաբա բան սովորեցրին: Այժմ կարիք է զգացւում և կանոնաւոր ճանապարհների...

Ամբողջ Տաճկահայաստանում, որքան մեզ յապյնի է, միայն մի հպատ խճուղի (շոսակ) կայ. Տրապիզոնից մինչեւ Երզրում: այն էլ Ասուած շոսակ համարէ... Երկրի մնացած բոլոր մասերը կարա-

ւանի, սայլի և որաւորի գիւղական (պրօցեսութիւնից) ճանապարհներ են, որ կառավարութիւնից ոչ մի ծախք չեն պահանջում: 1877-ի մարտ անդամներից յետոց սկսեցին առնել Եօլ-փարասը հարկը, որ ճանապարհներ շինեն, բայց... դեռ պէտք է շինեն...

Այս հարկն առնելում է ազգաբնակութեան բոլոր այն բղամարդ անդամներից, որոնց սարիբը 20-ից մինչև 50-ն է: Սմեն մարդ անդամներից, որոնց սարիբը է կամ 3—5 օր աշխատել, ունենալով հետք մի անհար պարփաւոր է կամ 3—5 օր աշխատել, ունենալով հետք մի ապա, 2 լուծ եզ և մի հոգակ (օգնական) կամ 13 դահեկան հարկ դաբ:

Սա ևս գանձւում է միաբարի ձեռքով: Զեղծութեները քիչ կամ շատ չափերով նման են նախկին հարկերի զեղծութեներին:

4) Ապահովութեան հարկ կամ Բազմանդ-փարասը: Այս հարկն աւելի նոր է, քան Եօլ-փարասըն: Սա գլխաւորապէս քաղաքներութիւն է գործադրուում, թէև գիւղերութիւն էլ սկսել են ներմուծելու փորձեր անել: Թաղերի և բնակիչների համար հարկաւոր է ապահովութիւն, պաշտպանութիւն ընդդեմ գողերի, աւազակների... Դրա համար հարկաւոր են թաղային գիշերապահներ, իսկ դրա համար էլ անհրաժեշտ է ոսթիլ: Սմեն դուն պարփաւոր է ամսական վճարել $1\frac{1}{2}$ —2 դահեկան, կամ տարեկան 18—24 դահեկան գիշերապահները պահելու համար: Միայն ծաղը, դառն ծաղը նրանութիւն է, որ գիշերապահներ չկան, բայց հարկը վերցնուում է... Եթէ երբեմն գիշերապահների նման մարդիկ էլ երեւում են, դրանք աւելի շուրջ մըրսներ են, որ նշանակւած են հսկելու խառնակի: Հայերի վրայ... և... գիշերապահները գողերի գողակիցներ, աւազակների թալանակիցներ են հանդիսանում, քան պաշտպանում բնակիչների կեանքն ու սրացւածքը:

5) Զբաղմունքի հարկեր: Այս խմբերի մէջ մընում են բոլոր արհեստաւորների և վաճառականների թէմէթ-թուհաթը և զուտ վաճառականական զիշլիան: Որանք ծանրանում են գլխաւորապէս քաղաքների բնակիչների վրայ: Սմեն մի արհեստաւոր վարպետից առնում են դարին 40—60 դահեկան, իսկ վարպետի քարգահներից (խալֆա) տարեկան 10—40 դահեկան: Վաճառականներն էլ պարփաւոր են թէմէթ-թուհաթ վճարել դարեկան 60—200—400 դահեկան, բայցի իսկական գիշերից: Յ դեսակ գիշերիներ կան, 1 կարգահնեկան, բայցի իսկական գիշերից:

դի, որ վճարում է տարեկան 8 ռակի կամ 864 դահեկան, II կարգի—5 ռակի կամ 545 դահեկան և III կարգի—3 ռակի կամ 315 դահեկան վճարով:

Թէմէթ-թուհաթը գործադրում է և գիւղերում, այն անձնաւորութիւնը, որ զբաղւում է լնարաննեկան կամ քնացին գործերով, համարում է իբր շառանձին գործով, ջոկ զբաղմունքով՝ պարապող մարդ և նրանից թէմէթ-թուհաթ է վերցւում:

Հոգեորականները և վարժապետներն ազար են որ և է զբաղմունքի հարկ վճարելուց:

Այն էլ ասենք, որ արհեստաւորների համար պարենք (patent) առաջ բանը դեռ չկայ:

Զբաղմունքի հարկերը ևս հաւաքում է մխարը կառավարութեան դրած քոչաններով (սրացագիր) մի դահեկանոց մարկա կպցնելով և իրեն հասանելիք $8-10^0/\circ$ -ը, մարկայի 1 դահեկանի հետ միասին վճարողի վրայ բարդելով:

Զեղծումները կապարում են որոշման մէջ. մի է վարսերը և բնշպիսի վարսեր, մի է I, II կամ III գիւղերայի վաճառականը, մրգան պէտք է տանել այս վարսերից (40° , թէ 60) կամ այս քարտահից (10° -ը, թէ 40)... Ահա զեղծումների համար բաւական բաց դուներ:

Քաղաքներում բնակւող այն անձերը, որ բնիկ տեղացի չեն, այլ ուրիշ քաղաքներից կամ գիւղերից են եկած, իրենց հարկերը չեն վճարում տեղական մխարին, այլ ուղղակի ալայ-բէցին:

6) Ամուսնական կամ ընտանեկան հարկ: Ամուսնանալու, մի ընտանիք կազմելու համար էլ պէտք է հարկ տալ. քի: է, այս, բայց և այնպէս դա էլ մի հարկ է:

Վերջին ռուս-պաճկական պարերազմից յեպոյ ներմուծւեց ծննդական վկայագրերի կամ «մարդահամարի թղթերի»—նուֆուզ-թեսքերեսը կամ չամիղիէ թղթերի գործածութիւնը: Հիմնւեցան բոլոր դաւառներում նուֆուզ-նազարէթի կամ մարդահամարի վարչութիւններ, ուր և մինում է լնարաննեկան հարկը, որուեղից և դրւում են թէ համիղիէները, թէ ներքին և թէ արտաքին անցագրերը: Նուֆուզ-նազարէթին ուղարկում է տպւած համիղիէներ առաջնորդարան, իսկ այնուղղ դնում է ազգաբնակութիւնը և գրւում, վճա-

րելով 1 դահնեկան առաջնորդարանին, $1\frac{1}{2}$ դահնեկան կառավարութեան Նթէ որ և է մի սնձի համար համբղիէ չառնւեցաւ մինչեւ 1 դարեկան հասակը և եթէ գաղտնիքը բացւեցաւ որ և է ժամանակ, մէկ մէջիդից մինչեւ 1 ոսկի (20—108 դահնեկան) տուգանքը են առնում: Երբ առաջին անգամ մոցւեցան այդ թղթերը, ժողովուրդը, կարծելով, որ նրանք սարքւած են կամ զինուր առնելու կամ որ և է այլ չար նպարակով, թագցնում էր իր արու զաւակների թիւը: Երբեմն մի ահադին գիւղ երեսում է կառավարութեան ցուցակների մէջ միայն իբր 80—100 հոգի պարունակող... Մեր կարծիքով՝ այս երեսոյթը քիչ չի նպաստում տաճիկ կառավարութեան հայերի թշւի մասին կազմած պաշտօնական փեղեկութիւնների այլանդադիութեան: Ոչ միայն համբղիէ չառնելու համար ծածկելը, այլ ուրիշ հարկեր գալու ծանր պայմանից առաջացած «մարդագողութիւն»ը ընդհանրապէս բուական պակասեցնում են հայերի թիւը Տաճկառանում, մանաւանդ Տաճկահայաստանում և նրա լեռնային գույք հայաբնակ մասերում:

Նշանւած զոյգը գանում է իր համբղիէներն առաջնորդարան, որ նրանց միացնեն և մի ընտրանիքի համբղիէ դամ կիրար վրայ դրեն: Առաջնորդարանը կացնում է նրանց մը համար 10 դահնեկանոց մարկա, առնում է 17 դահնեկան, որից $2\frac{1}{2}$ -ը ուղարկում է նուժուղ նազարէթին և հասպարել դալիս ու յանձնում նշանւածներին, իսկ մնացած $4\frac{1}{2}$ դահնեկանը (10-ը մարկայի վճարը հաշւելով) մնում է ասաջնորդարանի արկղը: Այսպիսով կառավարութիւնն առնում է $12\frac{1}{2}$ դահնեկան ամեն նշանւողից կամ ամուսնացողից.

Ի հարկէ բացի կառավարական դուրքը՝ կան և բազմաթիւ կաշառքներ, զրագրի փող, առաջնորդարանին 10—100 դահնեկան, նրա սպասաւորներին մի 5—10 դահնեկան, առաջնորդին իրեն մի 20—50 դահնեկան, քահանային 10—30 դահնեկան, դիրացուներին 5—10 դահնեկան և այլն, և այս բոլորը նշանւելու ժամանակ: Իսկ պատկելու ժամանակ առաջնորդարանին վճարում է հրամանի դուրք 20—40—60 և աւելի դահնեկան, ըստ բարեհան ցանկութեան առաջնորդի: Տրում է նորից առաջնորդին, նրա սպասաւորներին, քահանային, դիրացուներին, ժամկետին, մոմի կամ լուսադին, և այլն:

7) Կենդանիների հարկ կամ Աղնամ՝ կամ Ղամզուռ Այս հարկին ենթակայ են միմիայն այծն ու ոչխարը; Կովը, եղբ, ձին, էշը, գոմեշը և այլն համարում են իր աշխատաւոր անառուններ, դրա համար էլ նրանցից հարկ չի վերցում, իսկ այծն ու ոչխարը դիտում են իր արդիւնք տաղներ; Եթէ աչքի առաջ ունենանք, որ Տաճկահայաստանի նման մի լեռնոփ երկրում գիւղացու ամենաբազմաթիւ գնդեսական կենդանիներն այծն ու ոչխարն են, այն ժամանակ պարզ կը լինի, որ իսկաղէս անքան էլ մեծ կորուսր չէ կառավարութեան համար միւս կենդանիներից հարկ չառնելլ:

Ամեն մի աչծից, ոչխարից վերցում է րարեկան $4\frac{1}{2}$ դահեկան: Այդ կենդանիների թւահամարը կազմելու և հարկի չափը որոշելու համար կառավարութիւնը նշանուկում է մի գործակալ կամ մի կոմիսսիա ամեն մի շրջանի համար, նրան գալիս է մի քաթիր (գրագիր) և մի քանի օգնական զարթիէներ կամ սուլարիներ (ձիաւոր զինւոր): Գործակալ պաշտօնեան ձմրան վերջը և գարնան սկիզբը դուրս է գալիս պարուի: Դա ճիշտ այն ժամանակն է, երբ շոքերը նոր են սկսում, բայց երբ հօտը դեռ ևս գուրսը բաց դաշտում չի կարելի պահել, կենդանիների թիւը չի կարելի ծածկել:

Աստիճանաւորը մինում է գիւղ, իջնում գիւղապետի կամ ռէսի տանը: Ռէսը ժողովում է գիւղի բոլոր լնուանիքների գլխաւորներին իր օղան: Գործակալ աստիճանաւորը, որ անպայման միշտ թուրք է լինում, սկսում է հարցնել ամեն մէկից իր ունեցած անառունների թիւը: Քաթիրը ցուցակագրում է նրանց ասածները: Ապա գործակալն իր սւիբայցով սկսում է ընկնել գնից գունը և համարել բոլոր այծն ու ոչխարը: Եթէ գիւղացիք առաջուց պակաս են ասել, դա գիտում է իրը պետական սեփականութեան գողութիւն և, համարեա միշտ, աւել երկացած կենդանիները «յարքունիս են գրաւում», որ տաճիկ աստիճանաւորի լեզով ասել է «իր գըրպանն է խոթում»:

Գարնան սկզբներում այծի և ոչխարի ծինը նոր վերջացած է լինում, այնպէս որ մի շաբթական գառնուկները և ուլերն էլ են համարւում, որոնցից էլ հարկ է առնւում: Խակ թէ գրանցից որքանը կենդանի կը մնայ՝ դա կառավարութեան գործը չէ. վայլ որիոջ գլխին:

Յաճախ պարահում է, որ գործակալը լոյս է ընկնում որ և է գիւղ ամռան կիսին, անսպասելի կերպով և նոր համարում, վերաքննութիւն նշանակումն Այս և նման թակարդներ միշտ ծառայում են գործակալ մեծաւ մասամբ անօթի, անռոճիկ աստիճանաւորի համար իբր միջոց հարագանալու, զեղծումներ գործելու և կաշառքներ կլանելու:

Դան Փաղասը կամ արեան հարկ անւան փակ վերցնում են մագործներից, երբ սա եղ, կով կամ այծ ու ոչխար է մորթում: Այս հարկի չափը բոլորովին անորոշ և կամացական է. մի փեղ վերցնում են 3, միւս տեղ 4, 5 և աւելի դահեկան ամեն մի մորթուած կենդանուց: Բազարում կապարւող կենդանիների առ ու ծախի՛ համար էլ մի փոքրիկ հարկ կայ:

Շարունակելի)